«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017թ.

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

09.04.2018
N 011804

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Փ. Գևորգյան
Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ
Մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է “Փրայմ Կապիտալ” Ներդրումային ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:
Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ “Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օրգաններում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օրգաններում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Ա. Պետրոսյան

09.04.2018թ.

Հաշվետվություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	*(հազար դրամ)* 2017թ.	*(հազար դրամ)* 2016թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	2,077	6,335
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	-	-
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		2,077	6,335
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	37,358	40,251
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(39)	(52)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		37,319	40,199
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	8	6,210	14,440
Գործառնական եկամուտներ		45,606	60,974
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(27,482)	(29,509)
Այլ գործառնական ծախսեր	10	(559)	(642)
Շահույթը՝ մինչև հարկումը		17,565	30,823
Շահութահարկի գծով ծախսմ	11	(2,340)	(6,230)
Շահույթը՝ հարկումից հետո		15,225	24,593
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		15,225	24,593

Ամալյա Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արթուր Հարությունյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Գլխավոր հաշվապահ

09.04.2018թ.

Հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	*(հազար դրամ)* 2017թ.	*(հազար դրամ)* 2016թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	21,275	82,086
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	14	87,957	33,506
Հիմնական միջոցներ	15	587	1,113
Հետաձգված հարկային ակտիվներ	11	564	372
Այլ ակտիվներ	16	26,692	7,253
Ընդամենը՝ ակտիվներ		137,075	124,330
Պարտավորություններ			
Պահուստներ	17	3,109	2,292
Այլ պարտավորություններ	18	18	3,315
Ընդամենը՝ պարտավորություններ		3,127	5,607
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	19	80,000	80,000
Գլխավոր պահուստ		1,150	440
Չբաշխված շահույթ		52,798	38,283
Ընդամենը՝ սեփական կապիտալ		133,948	118,723
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		137,075	124,330

Ամալյա Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արթուր Հարությունյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Գլխավոր հաշվապահ

09.04.2018թ.

Հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 01 հունվարի 2016թ.	80,000	-	14,621	94,621
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	440	(440)	-
Համապարփակ եկամուտ	-	-	(491)	(491)
Մնացորդը 31 դեկտեմբերի 2016թ.	80,000	440	13,690	94,130
Համապարփակ եկամուտ	-	-	24,593	24,593
Մնացորդը 31 դեկտեմբերի 2016թ.	80,000	440	38,283	118,723
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	710	(710)	-
Համապարփակ եկամուտ	-	-	15,225	15,225
Մնացորդը 31 դեկտեմբերի 2017թ.	80,000	1,150	52,798	133,948

Ամալյա Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արթուր Հարությունյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Գլխավոր հաշվապահ

09.04.2018թ.

Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի մասին
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ) 2017 թ.	*(հազար դրամ)* 2016 թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ	1,555	7,872
Վճարված կոմիսիոն գումարներ	(7,857)	(8,039)
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)	14	(2,248)
Արտարժութի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ (վնաս)	66	(306)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(13,318)	(15,690)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(5,528)	(5,533)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում) այդ թվում՝		
Փոխատվությունների նվազում (ավելացում)	-	32,760
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	(46,949)	9,648
Այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)	20,056	52,580
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	(51,961)	71,042
Վճարված շահութահարկ	(7,966)	-
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	(59,927)	71,042
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(33)	(163)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(33)	(163)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(59,960)	70,879
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(851)	572
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	82,086	10,635
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	21,275	82,086

Ամալյա Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արթուր Հարությունյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Գլխավոր հաշվապահ

09.04.2018թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ-ն ստեղծվել է 2014թ.:

2014թ. հունվարի 24-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է արժեթղթերի փաթեթի կառավարման թիվ 0012 լիցենզիան:
«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ-ի ղեկավար մարմիններն են մասնակիցների ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը:
Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Ընկերության միակ մասնակիցն է Ներսես Սարինյանը:

2. Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում Հայաստանում: Հետևաբար Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանք ենթակա են հաճախակի փոփոխությունների և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Ընկերության գործունեության վրա կանխատեսելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. Պատրաստման հիմունքները

Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

3.1 Կիրառված նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ, որոնք էական ազդեցություն չեն ունեցել

ֆինանսական հաշվետվությունների վրա

Ստորև թվարկված նոր և փոփոխված ՖՀՄՍ-ները նույնպես ընդունվել են այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Դրանց կիրառումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ընթացիկ և նախորդ տարիներին ներկայացված գումարների վրա, սակայն կարող է ազդել ապագա գործարքների կամ պայմանավորվածությունների հաշվապահական հաշվառման վրա:

ՀՀՄՍ 16 (Փոփոխություններ) «*Հիմնական միջոցներ*» և ՀՀՄՍ 38 (Փոփոխություններ) «*Ոչ նյութական ակտիվներ*»: Մաշվածություն և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում:

Փոփոխությունները պարզաբանում են ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում առկա սկզբունքները, համաձայն որոնց հասույթն արտացոլում է այն տնտեսական օգուտների մոդելը, որոնք առաջանում են գործառնական գործունեությունից (որի մասն է կազմում ակտիվը), այլ ոչ թե այն տնտեսական օգուտները, որոնք սպառվում են ակտիվի օգտագործման միջոցով: Արդյունքում, հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի ժամանակ չի կարող օգտագործվել հասույթի վրա հիմնված մեթոդը: Այն կարելի է օգտագործել միայն ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկի ժամանակ՝ խիստ սահմանափակ հանգամանքներում:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014թթ.

2012-2014թթ. տարեկան բարեփոխումները միշարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերվող փոփոխությունները ամփոփված են ստորև.
ՖՀՄՍ *«Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործունեություն»*
Փոփոխվում է ՖՀՄՍ 5-ը՝ պարզաբանելու համար, որ երբ ընկերությունը ակտիվը (կամ օտարվող խումբը) վաճառքի համար մատչելիից վերադասակարգում է ուղղակիորեն որպես իրացման համար մատչելի (կամ հակառակը), ՖՀՄՍ 5-ի 27-29 պարագրաֆներում հաշվապահական ուղեցույցը չի կիրառվում:
Փոփոխությունները նաև վկայում են, որ երբ ընկերությունը որոշում է, որ ակտիվը (կամ օտարվող խումբն) այլևս հասանելի չէ շտապ իրացման համար, կամ որ իրացման տեղի ունենալն այլևս հավանական չէ, ընկերությունը պետք է կասեցնի իրացման համար մատչելի հաշվառումը և կիրառի 27-29 պարագրաֆների ուղեցույցը:

ՀՀՄՍ 12 (Փոփոխություններ) *«Շահութահարկեր»*
ՀՀՄՍԽ-ը թողարկել է *«Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում»* պարզաբանումը, որը ՀՀՄՍ 12-ում՝ *«Շահութահարկեր»*, կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,
- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,

- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,
- ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց:
Ղեկավարության գնահատմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Դեռևս չկիրառվող ՖՀՄՍ-ները և մեկնաբանությունները

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:
Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (2014թ.)
ՀՀՄՍԽ-ը թողարկել է ՖՀՄՍ 9-ը *«Ֆինանսական գործիքներ»* (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանասական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է նոր ուղեցույց՝ հեջի հաշվառման վերաբերյալ:
Ընկերության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»*
ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման նոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11-ը *«Կառուցման պայմանագրեր»* և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխուն գնագոյացմամբ, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետգնման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»*

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը: Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջները, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»*, նույնպես կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՆՍԿ 22 *«Արտարժույթով գործարքներ և կանխավճարների դիտարկում»*

ՖՀՄՍԿ 22-ը պարզաբանում է, թե ինչ փոխարժեքով պետք է իրականացվի փոխարկումը, երբ վճարումները կատարվել կամ ստացվել են նախքան համապատասխան ակտիվը կամ եկամուտը ստանալը, կամ ծախսը կատարելը:

ՖՀՄՍԿ 22-ն անդրադառնում է այս հարցին՝ պարզաբանելով, որ համապատասխան ակտիվի, ծախսի կամ եկամտի (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ Ընկերությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարի վճարումից կամ ստացումից առաջացած ոչ դրամային ակտիվը կամ պարտավորությունը:

Եթե կանխավճարները վճարվել կամ ստացվել են բազմակի անգամ, Ընկերությունը պետք է գործարքի ամսաթիվ որոշի կանխավճարի յուրաքանչյուր վճարման կամ ստացման համար:

ՖՀՄՍԿ 22-ը ուժի մեջ է մտնում 2018 թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարբ:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով:

4.3Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին

հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:
Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

4.4 Ակտիվների կառավարման գործունեություն

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունը նաև վաստակում է ակտիվների կառավարման վճարներ խորհրդատվական լուծումներ առաջարկելիս, որոնք ներառում են խորհրդատվական և հաշիվների կառավարման ծառայություններ: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

4.5 Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:
Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՍՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչ մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ՝ գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը

ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի

մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

4.7. Հիմնական միջոցներ

Ճանաչումը և չափումը

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

- Համակարգչային տեխնիկա 3-5 տարի
- Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 5 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

4.8Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

5. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին:

6. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	հազար դրամ	
	2017թ.	2016թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	138	623
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	1,939	5,712
	2,077	6,335
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	-	-
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	2,077	6,335

7. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

	հազար դրամ	
	2017թ.	2016թ.
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Հավատարմագրային կառավարման վճար և պարգևավճար	37,358	40,251
	37,358	40,251
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Միջնորդավճարների գծով ծախսեր	(39)	(52)
	(39)	(52)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	37,319	40,199

8. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	հազար դրամ	
	2017թ.	2016թ.
Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առքուվաճառքից զուտ եկամուտ	14	(2,248)
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	6,981	17,529
	6,995	15,281
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտներ	(785)	(841)
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	6,210	14,440

9. Ընդհանուր վարչական ծախսեր

	հազար դրամ	
	2017թ.	2016թ.
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(13,836)	(15,930)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(5,400)	(4,500)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(6,233)	(5,123)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(561)	(538)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(1,273)	(1,279)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(89)	(1,999)
Այլ վարչական ծախսեր	(90)	(140)
	(27,482)	(29,509)

Ընկերությունը գործունեությունը իրականացնում է գործառնական վարձակալությամբ ստացված տարածքում, որի ամսական գումարը առանց ԱԱՀ կազմում է 375 հազ. ՀՀ դրամ (2016թ.՝ 375 հազ. ՀՀ դրամ):

10. Այլ գործառնական ծախսեր

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Հասարակական կապերի գծով ծախսեր	(449)	(535)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(110)	(107)
	(559)	(642)

11. Շահութահարկի գծով ծախս

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	(2,532)	(6,224)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (ծախս)	192	(6)
	(2,340)	(6,230)

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2017թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	17,565		30,824	-
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	3,513	20	6,165	20
Չհարկվող եկամուտներ	(1,609)	(9)	(41)	-
Չնվազեցվող ծախսեր	436	2	106	-
Շահութահարկի գծով ծախս	2,340	13	6,230	20

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.16 դրությամբ	2017թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.12.17 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	458	164	622
Ստեղծված պահուստների գծով	458	164	622
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	(86)	28	(58)
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	(50)	50	-
Հիմնական միջոցների գծով	(36)	(22)	(58)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	372	192	564
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	-	-	-
Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի շարժը	372	192	564

	Մնացորդն առ 31.12.15 դրությամբ	2016թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.12.16 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	374	84	458
Ստեղծված պահուստների գծով	374	84	458

Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	(69)	(17)	(86)
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	(58)	8	(50)
Հիմնական միջոցների գծով	(11)	(25)	(36)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	305	67	372
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	73	(73)	-
Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի շարժը	378	(6)	372

12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	15,225	24,593
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ	15,225	24,593
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	80,000	80,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0,190	0,307
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	0,190	0,307

13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	21,275	82,086
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**21,275**	**82,086**

14. Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
ՀՀ պետական պարտատոմսեր	-	32,301
Փայեր	87,957	1,205
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	**87,957**	**33,506**

15. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Համակարգիչներ և կապի միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015	1,558	507	2,065
Ավելացում	212	73	285
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016	1,770	580	2,350
Ավելացում	21	13	34
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017	1,791	593	2,384
Կուտակված մաշվածություն			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015	402	193	595
Ավելացում	535	107	642
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016	937	300	1,237
Ավելացում	448	110	560
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017	1,387	410	1,797
Հաշվեկշռային արժեք			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017	405	182	587
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016	833	280	1,113

16. Այլ ակտիվներ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Կանխավճարված շահութահարկ	2,137	-
Ստացվելիք գումարներ հաճախորդներից	24,555	7,253
Ընդամենը	26,692	7,253

2017թ-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են հավատարմագրային կառավարման դիմաց ստացվելիք միջնորդավճարները:

17. Պահուստներ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Սկզբնական մնացորդ	2,292	1,872
Պահուստին կատարված մասհանումներ	3,015	2,589
Պահուստի օգտագործում	(2,198)	(2,169)
Վերջնական մնացորդ	3,109	2,292
Արձակուրդայինի գծով	1,429	912
Աուդիտի գծով	1,680	1,380

18. Այլ պարտավորություններ

հազար դրամ

	2017թ.	2016թ.
Շահութահարկի գծով	-	3,297
Այլ պարտավորություններ մատակարարների գծով	18	18
	18	3,315

19. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 80,000 հազ. ՀՀ դրամ է, որը բաղկացած է 80,000 (ութսուն հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնեմասերից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են: Պահուստային հիմնադրամը ձևավորվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է շահույթի առնվազն 3%-ի չափով կատարվող մասհանումներից պահուստի ստեղծում, որն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու համար:

20. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունը կապակցված կողմերի հետ գործարքներ չի ունեցել:
Ընկերության առանցքային անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են աշխատավարձի գծով ծախսումներում.

	2017թ.	2016թ.
Աշխատավարձ և պարգևավճար	2,514	5,355

21. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով Ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ:

Պարտքային ռիսկի վերլուծություն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար դրամ

	Հայաստանի Հանրապետություն	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,275	-	21,275
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	87,957	-	87,957
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	24,551	-	24,551
Ընդամենը ակտիվներ	133,783	-	133,783
Պարտավորություններ			
Այլ պարտավորություններ	18	-	18
Ընդամենը պարտավորություններ	18	-	18
Զուտ դիրք	133,765	-	133,765

Պարտքային ռիսկի վերլուծություն 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար դրամ

	Հայաստանի Հանրապետություն	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	82,086	-	82,086
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	33,506	-	33,506
Ընդամենը ակտիվներ	115,592	-	115,592
Պարտավորություններ			
Այլ պարտավորություններ	-	-	-
Ընդամենը պարտավորություններ	-	-	-
Զուտ դիրք	115,592	-	115,592

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ Ընկերությունը կկրի վնասներ:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է առավելագույնս նվազագույնի հասցնել անորոշության դաշտը, որը հնարավորություն կտա կրճատել ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկայնության տվյալ մակարդակի հիմնավորվածությունը:

Արտարժութային ռիսկ

Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

2017թ.
հազար դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,275	-	21,275
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	87,957	-	87,957
Հաճախորդների նկատմամբ	24,551	-	24,551
Ընդամենը ակտիվներ	133,783	-	133,783
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ	18	-	18
Ընդամենը պարտավորություններ	18	-	18
Զուտ դիրք	133,765	-	133,765

2016թ.
հազար դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,495	72,591	82,086
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	33,506	-	33,506
Ընդամենը ակտիվներ	43,001	72,591	115,592
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-
Ընդամենը պարտավորություններ	-	-	-
Զուտ դիրք	43,001	72,591	115,592

Տոկոսադրույքի ռիսկ

31.12.2017թ-ի դրությամբ Ընկերությունն չի ունեցել տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

	մինչև 1 ամիս	1-ից մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 1 տարի	1-ից մինչև 5 տարի	2016թ. 5 տարուց ավելի
Ակտիվներ						
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝	-					
երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-	32,301	-
Ընդամենը	-	-	-	-	32,301	-
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-	-	-
Զուտ դիրք	-	-	-	-	32,301	-

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

	2017թ. տոկոսադրույքներ		2016թ. տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	9%	-

Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:
Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ:

2017թ.

ԱԿՏԻՎՆԵՐ	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,275	-	-	-	-	-	21,275
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	87,957	87,957
Պայմանագրային պահանջներ	24,551	-	-	-	-	-	24,551
	45,826	-	-	-	-	87,957	133,783
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Այլ պարտավորություններ	18	-	-	-	-	-	18
	18	-	-	-	-	-	18
Ընդամենը	45,808	-	-	-	-	87,957	133,765

2016թ.

ԱԿՏԻՎՆԵՐ	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	31,500	1,205	32,705
Պայմանագրային պահանջներ	-	-	1,418	1,418	4,253	-	7,089
Ընդամենը	-	-	1,418	1,418	35,753	1,205	39,794

22. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

	2017թ.	2016թ.
Կանոնադրական կապիտալ	80,000	80,000
Մասհանումներ գլխավոր պահուստին	1,150	440
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	15,225	24,593
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	37,573	13,690
Ընդամենը	133,948	118,723